600.0425.13.11.19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 նոյեմբերի 2019 թվականի №425Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 20-Ի №80Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 17-ի №01/217-19 գրությունը՝ Հայաստանի Հանրապետություն հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի նոյեբերի 20-ի «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա տրամադրելու մասին» №80Ա որոշմամբ «Հաշվարկային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված՝ էլեկտրա-էներգետիկական շուկայի օպերատորի ծառայության մատուցման №0097 լիցենզիայի գործողության ժամկետը երկարաձգել տասնհինգ տարով՝
   1) որոշման մեջ «մեկ տարի ժամկետով» բառերը փոխարինելով «մինչև 2034 թվականի նոյեմբերի 20-ը գործողության ժամկետով» բառերով.
   2) որոշման հավելվածի 3-րդ կետում «մինչև 2019 թվականի նոյեմբերի 20-ը» բառերը փոխարինելով «մինչև 2034 թվականի նոյեմբերի 20-ը» բառերով.
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2019 թվականի նոյեմբերի 20-ից.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Ս.ԱՎԱԳՅԱՆ

ք. Երևան
13 նոյեմբեր 2019թ.